

Թորգում Պատրիարքին Այցը Ամենայն Հայոց Հայրապետին, Նիւ Եօրք.

Երուսաղէմի Ամեն. Պատրիարք Տ. Թորգում Արք. Մանուկեան Միացեալ Նահանգաց Արեւմտեան Թեմին տուած իր այցելութենէն յետոյ, Լոս Անճելոսէն Նիւ Եօրք ժամանեց Ուրբաթ գիշեր Դեկտեմբեր 18ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ, Տ. Տ. Գարեգին Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսին ապափինման իր բարի մաղթանքները յայտնելու:

Շաբաթ առաւօտեան տեսակցութենէն յետոյ, Պատրիարք Սրբազանը իր գոհունակութիւնը յայտնեց Վեհափառ Հայրապետի առողջական կացութեան մասին, որ կրնար խօսակցիլ եւ արտայայտուիլ: Եւ Ամենայն Հայոց Հայրապետը մերկայ եղաւ եւ մախազահեց Շաբաթ եւ Կիրակի օրերուն համար կազմակերպուած հանդիսութիւններուն որոնք Պատրիարք Սրբազան Հօր այցելութեան առիթով, Արեւելեան Թեմի մէջ Հայց. Եկեղեցւոյ Միացեալ Նահանգաց մէջ հաստատման հարիւրամեակի տօնակատարութեանց փակումը կը հանդիսադրէին:

Շաբաթ գիշեր, Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ համերգային յայտագիրը մանուկներու հինգ երգչախումբերու (Ուաթթթաւունէն, Փրափիտէնէն, Նիւ Եօրք եւ Նիւ Ճըրզի շրջանակէն Ս. Վարդան Մայր Տաճարի, Պէյսայտի Նահատակաց Եկեղեցիի եւ Յովնանեան ամենօրեայ Վարժարանի 200 երգեցիկներու) իրենց դիկավարներով: Յայտագրի աւարտին, Հայկ եւ Ալիս Գաւուհեան սրահին մէջ Տիկնանց Յանձնախումբի կարգադրութեամբ հիւրասիրութիւն մը տեղի ունեցաւ:

Կիրակի առաւօտ, Պատրիարք Սրբազանը Պատարագեց եւ քարոզեց Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ, անդրադառնալով Հայ Երուսաղէմի հոգեւոր ժառանգութեան եւ Բիթղիքէն 2000 ամեակի տօնակատարութեանց եւ Հայ ուխտաւորական խումբերու կարեւորութեան: Պատարագի վերջաւորութեան Վեհափառ Հայրապետը Ս. Դրիգոր Լուսաւորչի շքանշաններ շնորհեց ութը ամուկներու, որոնք Հարիւրամեակի տօնակատարութեանց առիթով իրենց սրտարուխ նուիրատուութիւնը կատարած էին Մայր Տաճարին: Ապա Հայ եւ Ալիս Գաւուհեան Սրահին մէջ ի պատիւ նուիրատուներու մասնաւոր ճաշկերոյթ մը տրուեցաւ:

Ապա, Պատրիարք Սրբազանը, խորհրդակցական ժողով մը ունեցաւ Երուսաղէմի Կալուածոց Մատակարարման Յանձնախումբի անդամներէն Ատենապետ Ճան Վարդանի, Դանձապահ Տէթ. Դաւիթ Նաճարեանի եւ Ատենադպիր Սեպուհ Պոյանեանի հետ:

Նոյն իրկումը, Տէր եւ Տիկին Գեորգ եւ Սիրվարդ Յովնանեան, Նիւ Եօրքի իրենց բնակարանի շէնքի հիւրասրահին մէջ, ի պատիւ Պատրիարք Սրբազանին եւ Վեհափառ Հայրապետին, ճաշի հրաշքած էին յիսուն անձեր, բոլորն ալ ծանօթ իրենց եկեղեցանուէր եւ ազգօգուտ մախածնունդութիւններով: Իրենց գոհունակութիւնը եւ գնահատմանքը արտայայտեցին Վեհափառ Հայրապետը, Պատրիարք Սրբազանը, Թեմի Առաջնորդ Տ. Խաժակ Արք. Պարսամեանը, հիւրընկալ Տիար Գեորգ Յովնանեանը եւ իր փեսան Տէթ. Դաւիթ Նաճարեանը, նաեւ Խաթիւրի Արք. Ենայրը որ Նախագահն է Ափիլի Օլ Գօնշընս կազմակերպութեան որուն անդամ են Պատրիարք Սրբազանը եւ Առաջնորդ Խաժակ Սրբազանը: Նոյն արտասանութիւններ եւ խմբական երգեր, հանելի մթնոլորտ մը ստեղծելով:

Երկուշաբթի, 21 Դեկտեմբեր 1998ին, Պատրիարք Սրբազանը նախ հանդիպում ունեցաւ Տէթ. Էսկար Յովսէփեանի հետ, որ 1988ի Երկրաշարժի առիթով Առաջնորդարանի բժշկական օժանդակութեան ծրագիրը ցարդ կը գործադրէ, եւ Երուսաղէմ այցելած ըլլալով իր սիրալոծար մերդրումը կը կատարէ: Ապա, Պատրիարք Սրբազան իր յարգալի տեսակցութենէն յետոյ Վեհափառ Հայրապետին հետ, առիթ ունեցաւ Առաջնորդարանի պաշտօնից հետ ճաշի սեղանակից լինելու:

Երկուշաբթի Թուրքիոյ Պատրիարք Սրբազան վերադարձաւ Երուսաղէմ: